

Ե. ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐ

1(194). ՓԱՍՏՈՒՄՍ ՀԱՐԱՄԱՆԻՔԻՑ*

Դարաճուլիս դարից¹ կյալիս են Քրդկան², մի ախչիկ են նշան տընըմ: Ախչիկը կարըմ չի ծնողների դաքին խոսա, որ ես սիրած ունեմ, տազ ա անըմ: Ուրեմը, որ նշան են տընըմ քյնըմ, տա՛ վեր ա ունըմ իրան սիրած տղին նամակ ա կյորըմ՝ Թիֆլիզ ա ըլըմ, որ եկան ինձ նշան տըրին: Տղեն ասըմ ա, կյորըմ ա ախչկանը, որ. «Իմացի հըրսանիքըտ երբ դի ըլիլ, ինձ տեղյակ պահի»: Երբ որ կյալիս են երկրորթ անքամը, որ բարըշեք անեն, որ՝ քանի մարթ պետք է կյանք, ո՞նց պետք ա անենք, ի՞նչ պետք ա ըլի: Էտ ախչիկը մանրամասը լսըմ ա: Ախչիկը բոլորը կյորըմ ա, որ էս ինչ օրը պետք ա պասկվենք ժամընը, քշերը մնան ախչկա տիրոնչ տանը, քեփ դեն անիլ: Կյորըմ ա էտ տղին, տղեն արթեն իմանըմ ա:

Վեր ա կենըմ էտ պասկի օրը, մի ընգեր տղա էլ վերցնըմ ա Թիֆլիզից, կյալիս ա, պոյեզ նստըմ, Աղստաֆա ստանցընը իչընըմ ա: Էտեղ մի հատ ֆայտոն ա կաղնած ըլըմ: Իրիզու՛ն ա: Սոտենըմ ա ֆայտոնչուն ասըմ ա.- Մենք քյնըմ ենք Քրդկան, ընդեղ մի ախչիկ կա, պետք ա պիրենք: Ախչիկն իրա կամքովն ա կյալի:

Ֆայտոնչու արժեքը են ժամանակ ըլըմ ա իրեք-չորս մանեթ: Ֆայտոնչին թուրք ա ըլըմ, ասըմ ա.- Կարա՛ս քսանիինգ մանեթ տաս:

Ասըմ ա.- Տվի:

- Դե, - ասըմ ա, - կանխավճար հանի տու:

Հանըմ ա 10 մանեթ կանխավճար տալի: Ֆայտոնչին ասըմ ա.- Նստեցեք:

Նստըմ են կյալի Ղազախ, Էտեղ էլ զապաս երկու ծի են վերցնըմ, կյալիս Քրդկան: Էտ ա

էն փեսացուն էլ ֆայտոնչուն ասըմ ա.- Մնացե՛ք:

Ինքը թաքուն պըրցրանըմ ա իրանց տուն, իմաց ա անըմ, որ եկել են, կարըմ եք հարսին հանեցեք, որ տանեն: Էտ օրը տարել են ժամընը պասկել են, եկել են նստած քեֆ են անըմ, թամադեն կենացնի ա ասըմ, զուռենն նվագըմ ա: Տղեն քյնըմ ա իրա ծանոթի տուն և իմաց անըմ, որ եկել են: Ախչկանը տուս են պիրըմ, տընըմ ա ֆայտոնչուն, թուրքին ասըմ ա.- Էլ վախիլ միք, ինձանից ախչիկ չեն կարա խլեն:

Էտ ըխչկանը վեր ա ունըմ ու յալա: Թա՛մադեն իրա կենացները շարունակըմ ա: Հի՛ի քեֆից եղը պարյեկ ա՛ հարսները, ըխճեքը պետք ա պար կյան: Հի՛ի զուռնաչքերն էլ նվագըմ են, որ հարսին պար ածեն:

- Հարսին պիրե՛ք, հարսին պիրե՛ք:

Ըստեղ են ընգըմ, ընդեղ են ընգըմ, հարսը չկա: Էն ա, որ տենըմ են, որ հարսը չկա, թողըմ են ջրվըմ: Էտ տղեն էլ չի ամուսնանըմ, քյնըմ ա իրանց կեղիցը վիրա մի խաչ կա՛ Սուրփ Սարքիս, վերանորոգըմ ա ու իրա անուճով պահըմ:

2(195). ՀԱՐՄԱՆԱՔՑ³

Էտ հարսնաքարի մասին որ ասըմ եք, էտ հարսնաքարը, էտ հարսի անունից պատմեմ ես: Էտ Մացականց Արուբին հայը իրան տղին քյնըմ ա նշան տյընըմ Սոնիչկին, Բաղանիս⁴ գյուղում՝ որպես իրան հարսնացու: Տա՛ մի

³ Հարսնաքար - գտնվում է Նոյեմբերյանի շրջանի Բաղանիս գյուղի մոտ (ծանոթ. բանահավաքի):

⁴ Բաղանիս - գյուղ Նոյեմբերյանի շրջանում: Նախկինում կոչվել է Բաղանիս Հայ, աղբրեջանաբնակ Բաղանիս-Այրում գյուղից տարբերելու համար (ծանոթ. բանահավաքի):

¹ Դարաճուլիս դարա - գյուղ Իջևանի շրջանում, այժմ Լուսաձոր (ծանոթ. բանահավաքի):

² Քրդկան - գյուղ Իջևանի շրջանում, այժմ Ենոքավան (ծանոթ. բանահավաքի):

տարեւն ժամանակով նշան ա տընըմ, մի իրեք ամսից ետով մատանին պերըմ են, որ.

- Արթին հայ, քու նշանը առ, քու տղին էլ Սոնիչկենն չի ուզըմ:

Սոնիչկենն բապարըմ ա, որ ես չեմ ուզըմ: Սոնիչկի բեռին թիֆլիզից կյալիս ա ասըմ, որ.

- Տու ուզիլ դես, պարտոյ կա մի հատ սեքարեցի, նրան:

Նա էլ համոզվելու համար նշանը եղ ա տալի: Մացականց Արթինը իրեք ամսից հետո կյալիս ա ասըմ.

- Ա՛ հաչատուր ջան, արի, Սոնիչկենն եկել ա ու մատանին ուղարկել: Սոնիչկին չես ուզու:

Չա՛: Տրանից հետո հաչատուրը երկու ծի ա վերցըմ եւ գնըմ Բաղանիս գյուղը: Սեկը տանըմ սարընը կապըմ, մի սարի կըլխի, ըտեղ տընըմ են առուըն Զըրսնաքար (հարսի քար): Ասըմ ա.- Սոնիչկա, տուս արի տանիցը:- Սոնիչկենն տուս ա կյալի:- Սոնիչկա՛, ինչի՞ ես իմ նշանը ետ տվել:

Թե.- հաչատուր, էլ ես քե չեմ ուզըմ:

- Խընթըմ եմ, Սոնիչկա, վնասի կիսիցը ետ տուն: Արի՛,- ասըմ ա,- ծին նստի, քյանք, քու փայ ծին սարի կըլխի կապած ա: Զյնըմ ես ընդի վեր կյալի, ես ոտով կկտըմ:

Սոնիչկենն ասըմ ա.- ճուրը կարծնցի կյուլիսն առել ա¹, հաչատուր, ինձանից ծեղը քաշի, քյանք քու գործին, էլ քե չեմ ուզըմ:

Ասըմա .- Էրեսըտ դենն արա, Սոնիչկա, ես քե խփըմ եմ:

Սոնիչկենն էրեսը դենն անելուն պես՝ հրացանով խփըմ ա Սոնիչկին սպանըմ: Սոնիչկենն են օրից որ խփված ա, իսկ, կյալիս ա հաչատուրը էտ օրիցը ընգըմ ղաչաղ, իրանց ծիանը երկուսն էլ օդանգվիցը կապըմ, ղնթողըն պաց թողըմ: Մացականց Արթինը մտնըմ ա, որ իր հարսը խփված ա, հաչատուրը ղաչաղ ա: հաչատուրը ղաչաղ մնըմ ա միառժամանակ: Իրանց արտերը, խոտերը հասնըմ են, հաչատուրը կյալիս ա, ասըմ ա.- Այ հերա, ես մշակ չեմ ճարըմ, ի՞նչ անենք:

Ասըմ ա.- Ես էլ չեմ ճարըմ.- ասըմ ա:

Իշի վրա տրած՝ էտ մարթին, մագիթ քսելով, գյուղերընը ծաղորանք անիլով ման են ածըմ, որ տղին չալ նաչալնիկին՝ հանձնի՞ Նիկոլային, նաչալնիկին, կարըմ չի:

հաչատուրը սպասըմ ա, որ իրանց արտերը հվաքի, խոտերը հվաքի նոր քյնա նաչալնիկին յավիտցա ըլի: Զյնըմ ա Բաղանիսի գյուղիցը մշակը բոլորը անըմ իրան արտերը, իրան խոտհարքնին հնձիլ տալի, վերջի ժամանակը ասըմ ա.- Տղերք, մի մարթը ինչ արծի:

Թե ասըմ են.- հաչատուր ջան, մի ռուբլի:

Թե ասըմ ա.- Էրկու ռուբլի եմ տըրել յուրաքանչյուր մարթիտ էն քարի տակին, խնթըմ եմ վերցնըք բաժանք, բայց էն կարողով, որ էս իմ արտիցը մի հատ խուրցն էլ վառք, ամեն խրցին մի մարթ կխփեմ: Խընթըմ եմ ամենքտ ծեր գործին կենաք, մենք չինայած բարեկամ ենք, բայց թշնամացել ենք: Էս խուրցը, էս խոտը կքյնա մեր օջախը, ե եղով ես ինչ կանեմ, եղով ես եմ գիղըմ:

Էտ բոլորը կատարելուց հետո գալիս ա հորն ասըմ ա.- Այ հերա, չալ նաչալնիկին կանչի, ինձ հանձնի իրան:

Եվ հերը հանձնըմ ա չալ նաչալնիկին: Ծի ու վրա են տընըմ, ոտները փորի տակիցը կապըմ, կընները միչկիցը կապըմ, ճամփա քցըմ: Տանըմ են Զարսնաքարի կուշտը՝ հաչատուրին, հաչատուրը ասըմ ա.- Նաչալնիկ ջան,- ասըմ ա,- ծին թեքի,- մի խաղ ասեմ.- ասըմ ա:

Ասըմ ա ու ճանապարհ ընգըմ հաչատուրը քյնըմ Գյանջեն, հին Գյանջընը, որը Կիրովաբաղ են ասըմ: Էտ Գյանջընը պահակի հրացանը խլըմ, չախմախը հանըմ, խընթըմ, որ.- Կասես, որ հաչատուրին խփել են:

հաչատուրը էտեղից էլի նորից ղաչաղ ա ընգըմ կյալի Գյուլաքար գյուղ, Ստեփանավանի մոտիկ գյուղերընը անուըն՝ Գյուլաքար, կալի ըտեղ տընըվորըմ մի հատ հարսի հետ ե ունեըմ ա իրեք տղա, երկու աղջիկ, որիցը նա միանալու ժամանակ կյնգանն ասըմ ա.- Այ կին,- ասըմ ա,- ես,- ասըմ ա.- Թուրքիայից

¹ ճուրը կարծնցի կյուլիսն առել ա - դարձված է, որը նշանակում է՝ բանը բանից անցել է, անհնարին է դարձել (ծանր, բանահավաքի):

² Չալ նաչալնիկ - գյուղացիներն այդպես կոչում էին ցարական պաշտոնյաները: Դեպքը տեղի է ունեցել Նիկոլայ 2-րդի գահակալության ժամանակ (ծանր, բանահավաքի):

եկած հայ չեմ,- ասըմ ա,- ես Ոսկեպարի գյուղից Մացականց Արթնի տղեն եմ: Խընթըրըմ եմ քյնաք տենաք իմ հորիցը, ծեր բիծենուցը, իմ ազգիցը ով կա, ով չկա, իմ անունը Խաչատուր ա:

Եվ Խաչատուրը ըտեղ մահանըմ ա:

Էն օրից սօր էտ քարի անունը տըրել եմ Զարսնաքար:

3(196). ԿՈՐԱԾ ԵՐԵՄԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ*

Տասնհինգ թվին մի ըրեխա կորել ա: Սրա պատմություն անեմ, մի քանի տեղ պատահել ա էլի, ասել ա էլի: Էտ տասնհինգ թվին մի ըրեխա էկել ա Սարիղամիշ: Դե սոված ա ըլել կնացել ա մի տուն, կնացել ա մի տուն, մի կնիկարմատ հեղել ասել ա.- Էտ ի՞նչ ես շի՛նու՛մ, ի՞նչ տղա ես:

Թե ասել ա.- Սոված տղա եմ, ըրեխա եմ, հացի եմ ման կյալիս:

Ասել ա.- Տղա ջան, արի կացի մեր մոտ, մի թուխս ունեմ, էն թուխսը պահի, ես հարևանի տներն եմ քյնեմ, գլորեն տանի ո՛չ:

Էտ ըրեխեն մի օր, երկու օր էտ թուխսը պահում ա: Էրկու օրից հետո ըրեխեք դե խաղ են անում, դե մա էլ ըրեխա ա, ուզըմ ա քյնա՛նա էլ խաղ անի չէ՞, պերում ա էտ ճուտեր թամուզ կապում ա մի թելից ու կապում ա հավի ոտից: Ինքն էլ ա քյնում խաղ անիլ, քյնում ա խաղ անի, մի ժամ, երկու ժամ, տենըմ ա գլորեն հավին վերցրել ա, ճուտերը կախ արած, տանում ա: Դա՛: Էտ էտ ա թող անում ա փախչում ա տո՛ւ: ասում ա.- Պառավը որ կյա, ինձ կծեծի:

Դա՛: Էն տղեն փախչեմ ա կյալիս ես պանը՝ Դարսա կողմը, քյնըմ ա մի կյուղ էլի: Դացի ա ման կյալի, քյնըմ ա, էլի մի մարթ ասըմ ա.- Տղա ջան, ի՞նչ տղա ես:

Թե ասըմ ա.- Որի տղա եմ,- ասըմ ա,- հացի եմ ման կյալի, տեր չունիմ, պան չունիմ:

Թե ասըմ ա.- Տղա ջան, արի՛, մեզ մի դավա ունիք, միե՛լ մի ավանակ, ամեն օր կտանես կըրծըցնես կաիրես, կյաւս քու հաց կուտես:

Դա՛:

Ասըմ ա.- Լավ:

Երեխեն մի օր, հինգ օր էտ դավեն, էտ էշը տանըմ ա հանդընը ըրծըցնըմ ա: Մի օր ծըրավըմ ա, միտք անըմ ա, ասըմ ա.- Ո՞նց անեմ, որ կորչին ո՛չ, ես քյնում ճուր խնեմ, կյամ:

Պերըմ ա իշին կապում ա դավի ճըտից, դե դավեն պանցր ա, էշն էլ քաշ ա, հա՛, իշնում ա ճըրի, մինչև կյալիս ա, տենում ա դավեն կյուլ-խը պարցորցել ա՝ էշը կախ ա ըլել, էշը կախ ա ըլել խեխտվել ա: Դա՛, տենըմ ա էշը խեխտվել ա, ըտեղան էլ ա փախչըմ: Փախչըմ ա կյալի էլի մի հայի կեղ, կյալիս ա էլի ման կյալով, ման կյալով՝ քյնըմ ա, իրիզվան դեմը մի կնիկամատի պատահըմ ա: Էտ կնիկարմատին ասըմ ա.- Զեքոս ըստի կենամ էլի, մայրիկ ջան,- ասըմ ա,- քշերս ինձ պահի:

Ասըմ ա.- Տղա ջան, ես էլ մենակ կնիկարմատ եմ, կարող ես քշերը մեր մոտ մնա՛ս:

Դիմա տղեն քյնըմ ա էտ կյնգան կուշտը կենըմ ա, մուքը տալիս ա, մի քիչ մնըմ ա տենըմ ա, էտ կին հղի ա ըլըմ, ցավ փռնըմ ա, որ ցավ փռնըմ ա, էն ըրեխին խնթըմ ա, տուս ա կյալի ասըմ ա.- Դա՛ քյնա՛մ Էն թաղը, ես ինչ տան տատմեր կա ընդի, կանչի կյա ինձ ազատի:

Էն տղեն մի քիչ դես ու դեն ա անըմ, տենըմ ա՝ հնար չկա, շատ որ խընթըմ ա, քյնըմ ա, ինքն էլ անծրե օր ա ըլըմ: Քյնըմ ա էտ տատմորն ասըմ ա, տատմերը ասըմ ա.- Ես կարալ չեմ կյամ, անծրե ա, ծին ա, դես ա, դեն ա:

Ասըմ ա.- Տատի,- ասըմ ա,- ես քե կշըլմ-կեմ:

Պիրըմ ա պռավին շըլալըմ, դե ցահել, պուճուր ըրեխա ա թեթև, մա էլ պըռավին շըլալըմ ա կյալի, կալեր ա ըլնում, կալըմ մի ֆոր ա ըլըմ ճուր լիզ, տա կյալիս ընգնըմ ֆորի միջին, ընգնըմ ա միջին, պառավը ընդի մնըմ ա, էտ ըրեխեն ըտեղան էլ ա թող անըմ փախչըմ, թող անըմ ա փախչըմ կյալի Դարս: Կյալի Դարս, դե ըրեխա ա էլի, հացի-ճըրի ման ա կյալի, տենըմ ա մի պառավ կնիկ փռնից հաց առնըմ ա քյնըմ, հասնըմ ա էտ հաց խըմ: Դե սոված ա էլի: Էտ կնիկ կաղնըմ ա անըծըմ ա տըրան.- Դա՛ սիե ըլիս, հա՛ միե ըլիս, իմ հաց խի՞ խլեցի:

Ասըմ ա.- Բա սոված եմ, ի՞նչ անեմ:

էտ կնիկ տենըմ ա, որ մի տեսակ իրան սիրտ զխշում ա էլի, ասըմ ա.- Տղա ջան, քու անուն ի՞նչ ա:

Թե ասըմ ա.- Իմ անուն Պողոս ա:

- Բա մեր չունի՞ս:

Ասըմ ա.-Մեր ունիմ:

Թե.- Անունն ի՞նչ ա:

Թե.- Դայկանուշ:

Ըստեղ տա տենըմ ա, որ իրան տղեն ա: Դա՛, իրան տղեն ա: Դիմա ծանոթվըմ են ընդի ու վեր են կենըմ քյնըմ: Էտ էլ տեհ:

Դիլ անըմ ա քյնըմ, քյնըմ ա Թիփլիզ հրա-
ման տալի՝ թե տու ազատ ես: Էտ Ջողազա
մելիքին ազատըմ ա: Դե հայերը գյափ անին,
ասին էլի, հա՛: Տասը թաղարիցը՝ մի թաղար
վեր ուներ, տասը կովիցը մինը վեր ուներ, էն
սուրուն հարսնիք, ըխճկեք վեր ուներ էտ, էտ,
էտ մելիքը: Տեհ տուժիլիս ա ըլել էտ
ժողովուրթին: Էն ա Շահը կյալիս ա տղրան
ազատըմ են, որ ժողովուրթը հանդարտվըմ ա:

5(198). ՍԵՎԵՐԵՑԻ ՍԱԵՐՆ

4(197). ԿՆԱՆՈՒՆՑ ԲՈՂՈՔԸ ՇԱԽՆ՝

Ղափյուղի ճամփովը Շահը կյալիս ա քյնըմ
Սևքարը, Սևքարիցը անց կենըմ Ջողազ, Ջո-
ղազից անց կենըմ Կոթի կյուղը, Կոթի կյու-
ղիցը անց կենըմ Թիփլիզ: Տեհ կըրճաղաք
ճամփա կա էլի դետը, Թիփլիզ քյնըմ:

Դին ժամանակը, որ Ջողազ ենք ասըմ չէ՞,
ըստեղ՝ Ջողազըմ մի մելիք ա ըլել, Ջողազա
մելիքը իփրև, ինչպես ասած մեր Ղամիրչյա-
նի՝ էն իք ա չէ՞, տա էլ էս Կավկազի, էս ըս-
տեղի քյոխվեն ա ըլել էլի, են ժամանակ: Ժո-
վուրթին տուժիլիս ա ըլել, ենըցցնիլիս ա ըլել
էլի էտ մելիքը: Էտ մի քանի կնիկ կա, մեր
գյուղից են, էս մի քանի տարին մահացան էլի,
մեծ կնիկ ա ըլել՝ Անա խանըմ, Անա խանըմը:

Խաբարը մանըմ են, որ շահը կյալիս ա
քյնմ Թիփլիզ՝ իրան կառնելը, ասին՝ Շահը
կառնեթով կյալիս ա: Կյալիս ա, էտ կնանիքը
քյնըմ են ընդեղ չոքըմ: Շահը, որ կյալիս ա,
ճամփին մտիկ անըմ ա, տենըմ ա՝ էտ կնանի-
քը ըստեղ չոքած, ոտն անըմ ա ասըմ.- Դը, ի՞նչ
կասե՞ք, քուրիկնի, խի՞ եք չոքել, ի՞նչն ա
պատճառը:

Ասըմ են.- Բա Ջողազա մելիքը մեզ շատ
տուժ ա տալի, շատ ենըցըցըմ ա:

- Դա՛, լւով.- ասըմ ա,- ոչինչ,- ասըմ ա,-
լւով, տուք քյնացեք:

Սաքոյի մասին էնքան գիդեմ, որ նա թուր-
քերի դեմ պրոտիվ ա եղել, էս հայերի սահմա-
նը պահող ա եղել: Էստեղից, ա՛յ Ջողազից
մինչև Շամշադին՝, ոչ մի թուրք չի կարացել,
որ Դայաստան մտնի: Էտենց մարթ ա ըլել,
նրա հետ էլ եղել ա իրան օքնական, մինը,
տերտերի Կահան ին ասըմ՝ Գևորգյան Վա-
հան, մեկն էլ՝ Սարբեկյան Տիգրան-Բեկ, ուժեղ
տղա ա ըլել էլի, որ նրա աչկին ճըպել չի՞,
մինչև անքամ նրա թուրքերը քառասուն հեկ-
տար տափ են տվել իրանց հանդամասիցը՝
վըխնիլեն: Մինչև էս վերջերը մեր ծեռնի ա
ըլել, բայց վերջըմ էլ հմի, որ նախանցյալ
տարի պա՛մ արին՝ պլանավորեցին, նրանց
հանդիցն ընգալ, մի ութամասուն հեկտար,
Ջողազին, ըստ ըլետ ընգալ իրանց սահմա-
նը: Մտցա՞ր:

Նա [Սաքոն] շատ ուժեղ մարթ ա ըլել էլի,
բայց կնիկը, միի կընգա մասին չեմ ասըմ:

Զէ՛, Սաքոյի կնիկը միշտ նրան օքնիլիս ա
ըլել Թիփլիզըմ, պա՛մ, սղիանք Թիփլիզըմ են
ապրիլիս ըլել: Էս Բորչալիի դուը միշտ հրա-
ցան պիրիլիս ա ըլել՝ դազաղի միջին, մարթին
օքնիլիս, որ թուրքի ըռեխը փակեն: Ա՛յ տեհ
մարթ ա ըլել:

Ասըմ ա, թուրքերը էն վախտը որոշըմ են,
որ կքյնանք Իջևան՝ չայ կխմենք, Երևանն էլ
օրեղ կանենք: Ասըմ ա՝ թուրքի մի աղա տյուս
եկավ ասեց, որ.- Ախր տուք հաշվի առեք է՛,

¹ Խոսքը ԴԿԿ առաջին քարտուղար Կարեն Դե-
միրճյանի մասին է: Բանասացը Ջողազի մելիքին
համեմատում է Դեմիրճյանի հետ՝ համարելով, որ
նա ուներ մնամորթնակ իշխանություն (ծանոթ.
բանահավաքի):

² Բանասացը ծեռքով ցույց է տալիս Ջողազ գյուղի
կողմը և դեպի այն կողմը, որտեղ գտնվում է Շամ-
շադինը (ծանոթ. բանահավաքի):

³ Աչկին ճըպել չի - չի վախեցել:

ընդեղ Սարքիս քշին ա, ընդեղ Սարքիս ան-
ըմալոր մարթ կա, նրա հետ էլ երկու օքնա-
կան, մինը՝ Տերստերի Վահանը, մեկն էլ՝ Տիգ-
րան-Բեկը: Նրանք,- ասել ա,- թույլ չեն տալ:

Եվ չեն կարացել, որ անց կենան, Ուզուն-
թալի փոշուր¹ չեն կարողացել անց կենան:
Մնացածը:

6(199). ՍԵՎԵՐԵՑԻ ՍԱԶՆՈՒ ՈՒ ԻՐ ԿՆԵՆ՝

Տըհանք չորս ախպեր են լել, չորս ախպեր,
մեծը տա յա ըլել՝ Սաքոն, երկու էլ քիր են ըլել,
մինն իմ մերն ա ըլել, միսն էլ Ջողազ² ա
մարթի քյացել, հա՛ նրան էլ ժառանգութիւն կա:

Տա՛ Ուզունթալեն³, հինգ թվին (1905), Ու-
զունթալեն հաներանք քյացած ա ըլել⁴: Ու-
զունթալիցը ըրուզունը մուրն ա ընգնըմ, հա-
նոր տանը ետ ա ընգնըմ, ծիյանը նստըմ են,
մինն՝ կնիկը, մինը՝ ինքը, կնիկն էլ նոր ըրեխա
պիրած ա ըլըմ, որ կյալիս են էս Կրիվոյի մոս-
տը, որ միի Պասիլոկն ա⁵, ըստի տենըմ ա ի-
րեք փուրղուն, ուրեմը, հրացանը պեռնած,
հինգ թվին, Աղրեքջան են տանըմ, որ Աղր-
եքջանը վե կենա հայերին կտորի: Դե մարթի
ծին ղաքին ա, իրա ծին քմակին ա, որ կյալիս
ա մի քիչ աղալամիշ ա անըմ, ասըմ ա.- Սար-
քիս:

Ասըմ ա.- Ի՞նչ ա:

Ասըմ ա.- Տեխա՞ր, որ էն ինչ փուրղուննի
են, ինչ տանին:

Թե.- Ի՞նչ տանին:

- Չենք էր, թվանք էր, պատրոն, թվանք:

Ասըմ ա.- Բա ի՞նչ անեն:

- Ա,- ասըմ ա,- թուրկուք չունեն՝ս, իս տու
հրացանը, ըրեխեն առ, գյուլլա-բորանի ըռե-
խը տա՞մ՝ հրացանի ըռեխը, փուրղունչքերը
փախչեն, փուրղուննին ետ թեքենք Սևաթըր:

Սարթը փորը վե չի ունըմ՝ իմ դայնի⁶: Էտ ա
սկսըմ ա, հրացանը ցաքըմ դքբա փուրղունչը-
քերին՝ պա՞ց թողըմ, կրակ պա՞ց թողըմ, փուր-
ղունչքերը փուրղունն էլ, էտ գենքն էլ բրախըմ
են ճալեն տառնըմ: Էտ կնիկը իրեք փուրղունի
ըռեխն էլ ետ ա տալի, քըմ մարթ ու կնիկ,
տանըմ Սևաթըր ու ըռափոտը վե կենըմ, էն
միալն էլ թվանքը տըծար ճարվեր, ամբողջ
կեղի մեծ-պուճուր վիհաքըմ գենքըմ, էն մո-
տիկ կեղերն էլ ու սկսըմ Բարխուդարլու ա,
Ջափառլու ա, Սոփլու ա, Դամբըլըր ա, պա՞ն
ա, քըմ Բուռն անց կցնըմ, մանըմ ե՞ս: Ըտեղ
հայդըմ են, կյալիս են փըռնըմ: Վեք թվին
(1906) ծիյով կյալիս ա, մանըմ ա, որ ես ըլել
եմ, քիրը կենըմ չի: Ծին նստած կյալիս ա,
ման կյալի, վե կյալի ըստի՝ մեր տըռնըմ, էն
ներքևը, սապուկ ա պիրած ըլըմ, պա՞ն ա պի-
րած ըլըմ ինձ միար՝ քվոր ըրեխի միար, պա-
րով, պաչըմ, էտ էլ վոեն տըռնըմ ու էն քյնալն
ա, ինչ հա՛, քըմըմ ա՞:

7(200). ԱՌԵՎԱՆԳՈՒՄ

Էն թվըմ⁸ թուրքերն ու լեզգիները լավ
հարսն ին տանըմ, լավ օղուշալ ա ըլըմ՝
սուրուն, վեր ին ունըմ տանըմ իրանց ընտա-
նիք, չէ՞ որ նրանցը փողով ա, իսկ որ սըռնց
սիրուն օղուշալը տարել են անփողի ա:

¹ Ուզունթալի փոշուր - Փոստային կայան է այժմ
Այգեհովիտ (նախկին Ուզունթալա) գյուղից ներքև,
Արսլան գետի ափին: Այդ տարածքով նախկինում
անցել են փոստային կայքերը, և այդ կետը եղել է
փոստային ծիեղը փոխելու կետ: Այժմ բանական է
(ծանոթ. բանահավաքի):

² Ջողազը գյուղ է Իջևանի շրջանում, այժմ կոչվում
է Բերքաբեր (ծանոթ. բանահավաքի):

³ Ուզունթալան նույնպես Իջևանի շրջանի գյու-
ղերից է, այժմ կոչվում է Այգեհովիտ (ծանոթ. բա-
նահավաքի):

⁴ Գրք.- Ի՞նչ էր Սաքոյի կնոջ անունը:

⁵ Պաստախան.- Գը՞, Մարյան:

⁶ Բանասացը նկատի ունի Ազատամուտ բանա-
վանը, որտեղից ոսոթոթ բառն աղավաղված է
(ծանոթ. բանահավաքի):

⁶ Նշանավոր հայրուկ Սևաթըրեցի Սաքոն բանասաց
Արշակ Օհանյանի ճեռնի է:

⁷ Գրք.- Սաքոյի մասին երգ էլ կա, գիտե՞ս այդ
երգը:

⁸ Պաստախան.- Գա՛, էտ երգը գիղըմ չեն: Էտ էլ
գիղեն ի՞նչ, իմ Ըրևանա թողը ասեք. «Գայրիկ, մեր
հարևան մի տղա կա, սին, սին տրան էլ են
բանդարկած ըլել, որ Գայաստանը ուզել ա.- ա-
սեց.- էն բոլոր գորավարների նկարն ունի»: Ասե-
ցի.- Տես իմ դայնիդը կա՞ պի: Էն ա ըրեխեն քյնըմ
ա, ասըմ ա.- «Քա էտ իմ պապի դային ա»: Մի
նկարը վեր ա ունըմ տալի իրան, պիրըմ, պիրուց
ըստի, հա՛, ըտեմ:

⁹ Բանասացը նկատի ունի XIX դարը (ծանոթ.
բանահավաքի):

Էն Ժամանակը մի քանի ընձակ տարած են ըլել Սևբարից: Բայց Ժամանակը Էն ըլել, ընդհոլ տղա ա ունեցել, պան ա ունեցել, վերջապես ընտելացել ա էլի: Սիեղ որ եկել են հա՛, մի տղի-ընեխի ին տարել, էտ տղա-ընեխեն էլ միշտ լաց ա ըլել, էտ կյնգան, վերջապես հայի ախ-ճիկ ա էլի, չնայած մեծ կնիկ ա: Ծա՛տ էտ տղեն լաց ա ըլըմ էլի, կանչըմ ա, տղըմն ասըմ ա:– Ես որ քեզ խորուրթ տամ, կարա՛ս փախչես:

Ասըմ ա:– Տատի քան, կփախչեմ:

Ասըմ ա:– Ա՛ գեղա, ես էլ եմ հայ ըլել, ինձ պիրել են ըստի, վեց տղա ունեմ, էրկու ախչիկ ունեմ, ըխչկեքը՝ մարթի քյոցած, տղեքը՝ հըր-սանիք արած, մարթը մեռել ա, բայց իմ տղե-քը պահըմ են ինձ: Արի տու ցիրեկ տապ արա, քըշերը փախի, ցիրեկ տապ արա, քը-շերը փախի, որ լիսանա կըտենաս, տապ արած տեղը, ըրեքնակը դյուն ա քյըմ, ըտե-ղով կփախչես: Քըշերը քյըմլիս տեղը ըրեք-նակի ուղղության կյըմաս, էն ա, որ քյըմաս այ-սինչ սարը հասնես, որ ըստի հասնես, ընդիան, որ տյուս կյան, ըռավտը մտիկ կանես Նալ-թոքան սարը՝ ըրեալ դի, Նալթոքան սարը: Ես Սևբարա ախճիկ եմ, փըլանի ախչիկն եմ, ինձ պիրել են, ըսկի իմ հերըմերը գիրըմ էլ չեն ես որդի եմ:

Էտ տղա-ընեխին ուղղություն ա տալի, էտ կնիկը՝ էտ պառա՛վ կնիկը², փախըմ ա կյալի:

Քյո՛վթառքյուսին սիմիճըղ պոկըմ ա տա-նըմ, ինչ անըմ: Քյըմ են կյալի, բողոքըմ, ասեցի:– Այ ժողովուրթ տա՛գ արեք, ես էտ քյո՛վ-թառքյուսուն կըփոխեմ:

Թե՛. Ո՛նց դես փըրնիլ էտ քյո՛վթառքյու-սուն:

– Ա՛, Ժեր ի՛նչ գործն ա:

Բայց ես կըլխի եմ, որ միճը վեց ըրեխա ունի, տանը ոչ մի պան չունի, տա՛ կնիկ ա, ճուլտ-մուլտ շորեր ա հաքըմ, կյլուխն էլ կապըմ չի, մազերը շաղ տալի, քյըմ ճեպըմ, պիրըմ էփըմ, ըրեխանցը ուտըցըմ ամեն օր:

Ասցի:– Կըփոխեմ:

Քյո՛ցի նստեցի, քըշերն ա, ժողովուրթը քնած, էնքա՛ն նստած կըցա, տեհա՛ մազերը շաղ տված, շալակը լիճը կյալիս ա, էկավ, որ անց կենա, ասեցի:– Սաթենիկ, էտ ո՛ւր ես քյըմ:

– Կի՛, ախպեր, քու ցավը տանեմ, բա որ սիե չանեմ, ըրեխեքը ո՛նց պահեմ:

Յիմի քյո՛վթառքյուսին ա՛: Էն որ ասըմ են սըտանա յա, սուտ ա՛, ամբողջ պանը սուտ ա: Սի պանի էլ ա հվատալ մի, մի կենը քեզ հվա-տի, քու հոգուն և քու սրտին, որ ինչ խիճ ունես, քու խըճին, թե չէ մնացածը սուտ ա, բալա, էտ ինչ որ ասեմ, էս ա ըլել, էն ա ըլել, թամուզ սուտ ա, գոռի հնարած պան ա:

9(202). ՎԱՅՐԻ ՄԱՐԴԸ

8(201). ԶՅԱԿԹԱՆՔՅՈՒՄԻՆՑ

Ես որ Թալըմը նախագահի ի, էն ներքի կեղացիք էկան ասեցին թե, էն կեշ Ժամանակն էր, ասեցին:– Տընածերձը սիմիճը ենք արել, մեր սիմիճը կյողանըմ են:

Էն միճն էլ ասեց:– Այ մարթ քյո՛վթառքյուսի ա, քյո՛վթառքյուսի, քյո՛վթառքյուսի ա:

¹ Նալթոքան Պայտաբափ լեռն է (Ժանոթ. բանա-հավաքի):

² Ումից է այս պատմությունը լսել հարցին բա-նասացը ասաց. «Է՛, հին պաներ են» (Ժանոթ. բա-նահավաքի):

³ Բանահավաքի այն հարցին՝ սատանա կա՞, թե՞ ոչ, բանասացը հերքեց սատանայի առկայության փաստը և փոխարենը պատմեց այս իրական պատմությունը (Ժանոթ. բանահավաքի):

Վայրենի, անասուն մարթիք ես տեհել եմ էլի, վայրենի մարթ՝ վայրիացած: Վայրենի մարթ, վայրենիացած, ու հու հագուստ չի ը-լել, մազը կոխած, անասունի պես, բայց տե-նըմ ես, որ մարթը՝ մարթ ա, կնիկն էլ՝ կնիկ, ոնց որ կապիկնին:

Յարց:– Որտե՞ղ ես տեսել: Մազը ի՛նչ գույնի է:

Պատասխան:– Անտառներըմ: Ի՛նչ գույնի ա, մազը սև գույնի էլ կա, շեկ գույնի էլ կա, էտ ես տեհել եմ, էտ կարալ չեմ ժխտեմ, բայց կո-րան, կտորվեցին:

Յարց:– Որ քեզ տեսնում էին, փախչում էի՞ն:

Պատասխան.- Հա՛, փախճըմ ին։ Մի քըշեր մեր կեղացի մինը քյըմը ա էս դղեն մեծ անտառ կա՛ Կիրանցա, էտ Կիրանցա անտառընը ֆորս անըմ ա, տյուս կյալի վիրեն օքա ա ըլըմ, մթընմ ա, ասըմ ա.- Դե տ էս քախիս էլ կարալ չեմ քյըմմ, մի օդի՛ միջի կրակ անեմ, մսից խորոված կանեմ կուտեմ, տուռը կփականեմ կքնեմ, ըռավտը կլիսանա, իմ ֆորսը վե կուլենեմ կքյըմմ:

Կյալիս ա, էտ ա կրակը կըռցըմ, հա՛ մի երկու-իրեք շամփուր կտորըմ վրեն տընըմ, տենըմ ա տըիռնցից մինը մտավ մեչը, մարթը՝ մազը կոխած, կյալիս ա կրակի դրադին պըպըզըմ: Էտ շամփուրին՝ չորս շամփուր ա, են երկուսը վեր ա ունըմ, որ պան անի, են երկուսն էլ նա ա վեր ունըմ: Կըլխի ա ըլըմ էտ մարթը՝ մեր կեղացին, հմի նրա թռեները Լալիգյուղըն են՝ էտ մարթի, էտ ա քյըմը ա մի են լամվ տեղերիցը, քյուք տեղերիցը կտրըմ, պիրը ըլետ կրակին տընըմ, խըրովըմ ա, խըրովըմ ա էտ մարթը, էտ յեղըկուլոլ միսը հանըմ ա իրա շորերը քսըմ, տա՛ էլ յեղը հանըմ ա իրա լաշը քսըմ, ինչ որ նա անըմ ա, են էլ նա ա անըմ: Մի կառած ընճղակոթ ա վեր ունըմ էտ մարթը տընըմ իրա վրա, տա՛ էլ վեր ա ունըմ տընըմ իրա վրա, նրա մազերը չէ՛, կառչըմ ա, կառչըմ ա չէ, օդիցը ծվըմ ա ու տուս ըլըմ, տուս ըլըմ քյըմը ներքև, հեռու առու ա ըլըմ, էտ առվի միջին թավիլ-թավիլ անըմ, ընքելանը ըստակըմ: Ըռավտը վեր ա կենըմ էտ մարթը տենըմ ընդի յա, վեր ա ունըմ փոս կըտրըմ նի քցըմ, իրա վեշը շըլակըմ կյալի:

¹ Օդա - Իջևանի գյուղերում հողակառույց ժամանակավոր կացարան՝ սարկոլորենի համար: Օդան արտաքինից (դիմացից) եռանկյունաձև է: Օդայի հիմնային մասը կառուցվում է գերաններով, ունի մոտ 3 մ երկարություն, բարձրությունը՝ մարդաբոյ (1,5-1,8 մ): Երկու հատ գերան ուղղահայաց բաղում են հողի մեջ՝ իրարից 2,5-3 մ հեռավորությամբ, դրանց վրա վերևից ամրացվում է մի ուրիշ երկար գերան, այնուհետև լատաններ շարուն երկու կողմից, մի ծայրը մեջտեղի գերանի վրա, մյուսը՝ հողի մեջ, ստացվում է եռանկյունաձև կառույց, որի արտաքին մասի վրա թեղությամբ ծառի մյուղեր են փռում, որոնց վրա շարվում են հողի ճիւղեր: Մի կողմը փակվում է ամբողջությամբ, իսկ մյուս կողմը բաց է թողնվում դրան համար: Դռան մոտ սարքում են կրակարանը կամ օջախը՝ բուխարիով, որ ծուխը դուրս գա (ծանոթ. բանահավաքի):

Հարց.- Այդ դեպքը ո՞ր թվին է եղել:
Պատասխան.- Ո՞ր թվին ա ըլել, տա՛ ես իլա տառ ըլած չեմ ըլել, ես լսել եմ պապերից:
Հարց.- Բա ասում ես՝ տեսել եմ:
Պատասխան.- Էս մթին տեսել եմ, դի տալիս տեսել եմ, էտ մըթեկեքը են ա քըշերը մչկա լիսը դի տին է՛, է՛, ուրիշ պան չդի տին, են ա է՛, է՛, է՛, չքել լիսը են ա տեհ անին: Հա:
Հարց.- Բայց մոտիկից տեսել ես՞:
Պատասխան.- Կորան էլի, էլ տեհ պան կա ո՛չ:

10(203). ՔԱՅԸԸ

Սիճի՛, ըրեխա չունի: Չէ, ունի..., առաջի ըրեխես էր՞, քյըմը եմ ծուրը: Քյնացի տեհա, են մեր Իլյազը բաղ ա վե կալել է՛, են բաղի կուշտը մըիչ տեհա՛ մի էսքան, ալ էսքան³, կըլխից կըլխարկ՝ նստել ա, թե ասեց.- Արի՛:

Ծուրը եմ քյըմը, մեր ծուրը հեռու ա:
- Արի՛,- ասեց.- Ես քե հմար եմ ճամփա պահըմ⁴:

Էս դժգոյան, պաճուրկ, աչկերը⁵...
Էսքան, էսքան, մի մեծ, ու գլխարկ էլ կըլխին, ամեն մի, իսան ա էլի, ու մատները պաճուրկ, ոտները պաճուրկ, երկու ծեռը սեե արած՝ կոխկներին տըրած ծեռները⁶: Լուզուս կապ ընգձով, ասեց.- Քեզ համար եմ ըստեղ կաղնել:

² Բանասացը նկատի ուներ, որ ինքը դեռևս երիտասարդ էր և միայն առաջին երեխան դեռ ուներ: Հավանաբար նա այդ ժամանակ եղել է 18-20 տարեկան:

³ Բանասացը ծեռքով ցույց է տալիս, թե իրեն հանդիպած էակը ինչ չափի էր:

⁴ «- Ի՞նչ տեսակ էր, փոքր է՞ր,- հարցնում է բանահավաքը»:

⁵ «- Բոյն ինչքա՛ն կըլեր, մի հիսուն սանտիմետրանոց կըլե՞ր,- դարձյալ հարցնում է բանահավաքը»:

⁶ Բանասացի նկարագրելով նրան հանդիպած էակը, որին նա քաջք էր անվանում, մի կեսմետրանոց հասակով, բարակ ոտքերով ու ծեռքերով, մեծ գլխով, գլխին սև գլխարկ դրած արարած է եղել, որը խոսել է բանասացի հետ նրան հասկանալի լեզվով: Այս նկարագրությունը հիշեցնում է այն մարդկանց նկարագրությունը, ովքեր տեսել են այլմոլորակային էակների (ծանոթ. բանահավաքի):

Մնացի՞ դըմբըրված կաղնած: Ներքնուց Նատոյի քիոր, քե են ա, են դի տվեցի, որ ասեցի.- Սնմած քան, լեղո արի, լեղո, էստեղ մի պան կա, տու էլ տես:

Ըրեխեն վազ տվուց, մընջը նա էկավ, նա թռավ կորավ, անհայտացավ:

- Ախճի՞.- ահեցի,- ա՛ ըու մեչկըտ կոտրի, մի քիչ շուտ կկյիր էլի:

Թե.- Ես էլ տեհա, հըրաքաթ տվի, որ կյամ ես էլ տեհամ:

Նրանից [եղը] իրեք տարի ես տենդեցի, ցերմութիւն տվի, հա՛, իրեք տարի՝ պըլուկի: Վերջը մեր Սեդրակ ուստեն թափեց ինձ: Յրե միտ աչկերը դաքիս, աչկըս քցեցի՜... Յա՛, չէ՛, չէ, մուք չէր՜...:

Սև, սամսեն սև, բայց աչքերը մե-մե՛ծ, ինքը պարա՛կ, մատները պարա՛կ, ոնց որ չոփեր ըլեր: Էլ գիդացա ո՛չ... թըռավ, են ա կորավ, կորավ քյնաց՜:

Էկա պատմեցի, ահեցին՝ քաջը ա՛:

Դե ես միտ տեհա, ծեզ մատաղ, ի՛նչ ասեմ: Յա՛, հա՛, վախել եմ՝ ուժեղ, մեր հայի ուստեն էն իք արավ...:

Գիդես միի էն եթե ըլի, ես էլ կըուժեմ⁵: Երրի շան պըլուր ա, ճորի շան, ճորի միչին ապրող մի կեմբանի էլի, միայն քե որը ըլի, նրա պըլուրն ա, մընէլ ես ճանցերը, որ ծաք եմ տալի, է՛, արկանոցը, որ միչին աշխատըմ եմ, նրա էն մուըն, արկանոցի մուըն, էն էրկուըն գիդացա ո՛չ ինչ ա: Էտ չորսը իրար ա խառնըմ ու սիե կըլխիս չար ա քցըմ, ամանը ճուր ածըմ, ըռաչիս տընըմ, ըտիան էն մուըն կըռցըմ եմք, էն ճուրն էլ ընդեղ, միչին ըրևըմ ա, ճորի միչին ըրևըմ ա՛: Երրի միչին ըրևաց,

ըլետ տեհա, որ դաքիս կաղնած հետս խոսըմ ա.- Բեզ միար եմ եկել:

Էրկու հետը տեհա, էն երրորդը տեհա ո՛չ: Յա՛, հա՛, լավացա: Իրեք հետ միտ արավ ուստեն: Միի կա ոչ, էտ կա ո՛չ: Էտ դաքմաըն չկա:

[Բարց.- Իսկ ի՞նձ քաջը կա՞,- հարցնում է բանահավաքը]:

Չէ՛, չկա, քաջը որդի՞ան ա՛:

Սատանան գիդըմ չեմ, քե մատաղ, ես սատանեն գիդըմ չեմ, բայց քաջը ես տեհել եմ իմ աչկովը: Յա՛: Նա ինձանից յեղո էր տեսել⁸: Յա՛, հա՛, էլետ ընդեղ՝ նույն տեղը⁹:

Չէ՛, նա ի՛նչ փետը՝ չալիկը, շարտել էր, քե տա, ամա՛ լա. «Ո՛նց գիդացա տափը մտավ, ո՛նչ գիդացա թըռավ, են ա չալիկս ծեղիս՝ սիե անի, որ տամ»: Նրանը շատ ա մոտիկ ըլել գլխիդ: Չէ՛, չէ՛, խոսել չի հայի հետ, խոսել չի: Նա էն ա, որ¹⁰...

Յա՛, ցիլիդորի պես սև գլխարկ էր, պլուկի, մեծ¹¹: Յա՛: Ինքը, ինքը պուճուր էր, ոնց որ տիկին, կյուլիսը մեծ էր, վիզը էլ՝ պարա՛կ, ոնց որ դաստի տըրած, սիե տընգած:

Էսով մոտիկ անի է՛, որ սուտ ասեմ ո՛չ, էրկու ժամ, իրեք ժամ միտ տեց, հա՛, կաղնած նա պաճներ ասեր, ես հսկանի ո՛չ¹²:

Յա՛, խոսեր, ես հսկանի ո՛չ, ուշքըս քյա-ցած, դըմբըրված կաղնած ի, են ա մըջա նկա-տեցի, որ ներքնուց¹³... Դի տվի, որ ախճի՛, արի է՛, արի՛:

Թե.- Ես էլ եմ.- ասեց.- ա՛ քիր.- ասեց.- ես էլ եմ տեհել.- ասեց:

¹ «- Տերեկ է՛ր, օրը ճաշին ես տեսէ՛լ.- փորձում է օրվա ժամը ճշտել բանահավաքը»:

² «-Ի՛նչ գույնի էր,- կրկին հարցնում է բանահավաքը (ծանոթ բանահավաքի):

³ «- Բա ո՛վ քեզ ասեց, որ քաջըմ ա.- հարցնում է բանահավաքը»:

⁴ «- Բա քաջըն ցերեկով դուրս ա գալի՞ս,- կրկին հետաքրքրվում է բանահավաքը»:

⁵ Այստեղից արդեն բանասացը նկարագրում է, թե ինչպես են իր վախը բուժել:

⁶ Բանասացի պատումը մի քիչ պարզ չէ. հալված մուըն լցնում են ջրի մեջ, որը սառչում է, և տարբեր պատկերներ են ստացվում, ըստ այդ պատկերների՝ բուժողը որոշում է, թե ի՞նչ վախի վախն ինչից է (ծանոթ. բանահավաքի):

⁷ «- Իսկ սատանան ո՞րն ա,- կրկին հարցնում է բանահավաքը»:

⁸ Ըստ բանասացի՝ պատմածի այդ արարածին տեսել էր նաև համադյուրացի մի ծերուկ:

⁹ «- Նրան էլ է՛ր բան ասել,- հարցնում է բանահավաքը»:

¹⁰ «- Ասում եք՝ գլխիս գլխարկ էլ կա՞ր»:

¹¹ «- Գլուխն էլ մեծ է՛ր, ինչքա՞ն կըլներ» (ծանոթ. բանահավաքի):

¹² «- Անընդհատ խոսում է՛ր,- հարցնում է բանահավաքը»:

¹³ Բանասացը պատմում է, որ այն պահին, երբ ինքը վախից քարացած է եղել, համադյուրացիներից մեկի աղջիկն է եկել դեպքի վայրը և հեռվից տեսել է այդ արարածին (ծանոթ. բանահավաքի):

Իմ աշակերտներից մեկը՝ Թամրազյան Յրանտը¹, համալսարանն ավարտելուց հետո ուսումը նորից շարունակում էր, հայրը համաձայն չէր: Մի օր էլ Յրանտի հայրը՝ Սմբատ Թամրազյանը, տեսնեմ, իրեն ծեր հալովը, չալիկը վե կալած՝ եկավ ինձ մոտ: Բավական զրուցելուց հետո պարզվեց, որ նա ինձ մոտ խնդիրքով է եկել:

- Ա՛ բալա,- ասըմ ա,- ի՞նչ ասեմ, մեր ըրեխեն էլի՝ են գյաղեն, պըրծել ա համալսարանը, էլետ ուզըմ ա սըվորի, ինչ անըմ եմ՝ անըմ չեմ, ռեյի չի կյալի, ասըմ ա՝ քյնալ դեմ, հմի ումուղըս տու ես, քու անըմ տվել եմ՝ էկել, քե անգաճ ա տընըմ, ասա՝ քյնա ո՛չ, մեխկ եմ, մեծացել եմ, դըմաըմ չեմ:

Բանից պարզվեց, որ Յրանտին ասպիրանտուրա են ընդունել, հայրը համաձայն չի: Դե ի՞նչ կարող էի անել ես, էդպիսի գործում ինչպե՞ս կարող էի խոչընդոտ հանդիսանալ: Մի կերպ համոզեցի.

- Ախր, ա՛յ Սմբատ բիճա, նա հիմա ինձանից էլ բարձր ա իր կրթությամբ, նա հիմա չի լսի ինձ:

- Է՛, ընկեր խենճյան, ասըմ ես էլի,- ասըմ ա,- ումուղըս տու իր, տու էլ տիե տուս եկար,- ասըմ ա,- արի, մի առակ էլ ասեմ ու քյնեմ:

Առակը հետևյալն էր.

Յարևան թուրքերը ուզըմ են հայից խորուր ըստանան, որ խելոք խորուրդ լինի էլի: Որի մոտ գընըմ են, տեսըմ են՝ հարբած, խմած:

Իրար մեջ խորիրդակցըմ են, ասըմ են.- Գնանք դոջա Վաթթանի կուտը:

Գալիս են գոջա Վաթթանի մոտ, գալիս են տեսըմ՝ նա էլ ա գալիս են զրուցըմ, նա էլ գինով հյուրասիրըմ ա էտ թուրքերին:

- Այ՛, ումուղըմս գոջա Վաթթանը դի, օդա չախըր իջան չախտի:

Այսինքն, թե.- Յույսներս ալևոր Վաթթանն էր, նա էլ խմող դուրս եկավ:

- Յմի իմ ումուղը,- ասըմ ա,- դու էիր, դու էլ,- ասըմ ա,- Յրանտի խելքիցն ունես:

¹ Յրանտ Թամրազյան - հայտնի գրականագետ, ԳԱ ակադեմիկոս, եղել է Խորս՝ բանասաց Յայկ խենճյանի աշակերտը, որը նրան ուղղորդել է դեպի գրականությունը և նպաստել է, որ ապագա գրականագետը բանասիրական կրթություն ստանա (ծանոթ. բանահավաքի):